

«Մի տեսակ բարձրագոյնութիւն Քրդերի կողմէ ի գործ կը գրուէր հայ «Փրլա»ներու դէմ՝ անարգանքի ու արհամարհանաց համար: «Փրլա» եղածին կը ձգէին ձեռաց երկու թաթերու վրայ ու դարձնելով չորքոտանի անասուն, յարգով լեցուն էչի գլխին անցնելիք տոպրակը կը կախէին անոր գլխէն, ու ամուր կապելէն յետոյ, երկաթէ սեխերով անոր կը խթէին իբրեւ իշու ու կը կանչէին. «կե՛ր Փրլա». Փրլան հարուածներ կրելով չունչը կը կտրուէր տոպրակին մէջ ու կը մեռնէր: Մենք քիւրդերս այս կընէինք անոր համար, որ այդ «Փրլաները», ոչ այն հայերէն էին որ մեր դէմ կռուելով ու յաղթուելով մանէին մեր գինուորներու շարքը, և ոչ անոնք անկախ կռուողներ ու յաղթողներ մնալով, անոնցմէ մեր ձեռքը ինկած էին իբր գերի. այլ ասոնք այնպիսիներէն էին, որոնք ձեռները ծալած նստած կ'ապասէին թիւրք իշխանութեանը որ մեզ յաղթէր, ու անոնք այդ ուրիշ յաղթողի շնորհը վայելելով հանգիստ նստէին ու ապրէին:

Օսմանեան պետութիւնը չը կրնայով հպատակեցնել լեռնականները՝ (թէ քիւրդ և թէ հայ), «Փրլաները» մնացին թիւրքի ու քիւրդի միջև հարստահարութեան ենթակայ, մինչև Սուլթան Մէճիտի 1839 ի հրատարակած Թանգիմարը:

Թանգիմարի հաստատութեամբ Քիւրդերը աստիճան մը միայն զսպուեցան խաղաղ և աշխատաւոր հայերուն կամ ըստ իրենց «Փրլա»ներուն հարստահարելէ:

Այնուհետեւ, աւազակութիւններէ զատ սկսան պարագուիլ անասնապահութեամբ, որով մեծ մասամբ իրենց ձեռքը մնաց ոչխարի, տաւարի, բրդի, թիֆթիկի, իւղ-պանրի առտուին ու վաճառականութիւնը:

Մենք կը թողնենք Հայաստանէն դուրս մնացած Կ. Պոլսի և ուրիշ գաղթականութեանց հայերու մասին խօսել, որովհետեւ անոնք շատ քիչ կապ ունին մեր այս խնդրին հետ: Միայն կարելի է մի քանի խօսքով ըսել, որ անոնց մէջ մտնելով արուեստաւորական, վաճառականական, թիւրք-պաշտօնական